

ՔՍԱՆԵՐԻՆԵՐՈՐԳ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Յարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբլ.

Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրուած են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

կամ Tiflis. Redaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարուած են

խրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յետադիմական շարժում գերմանիայում. Մա-
մուլի կարծիքը հայոց հարցի մասին. Նոր տեղե-
կութիւններ. Ներքին Տեսութիւն. Կ. Պոլսի
հայոց պատրիարքի անդրանիկ կոնգրէսը. Նամակ
Ալեքսանդրապոլից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարս-
կաստանից. Արտաքին լուրեր. ՀԱՌԱՊԵՐՆԵՐ.
ԲՈՐՍԱ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Կ. Պոլսում.

ՅԵՏԱԳԻՐԱԿԱՆ ՇԱՐՔՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

«Անհատաւոր է այն, ինչ կատարուած է
Գերմանիայում Սա ցնորք չէ, այլ իրա-
կանութիւն: Դադողը չէ, այլ կայուն է հետ
խաղում են, ինչպէս խաղալիք, և պատան
են պատրաստուած նրան թաղելու համար...»
«Այն, ինչ որ չը կարողացաւ անել Հեո-
մը հաղորդաւոր տարիների ընթացքում,
սոսկալի պատերազմների միջոցով, երբ
մորթուած էին հարկեր հաղորդներով, երբ
ամբողջ երկիրը ներկայացնում էր աւերակ-
ների մի կոյտ, երբ ինկվիզիցիան թագաւո-
րուած էր իր սարսափելի խարոյկներով...»
այդ կատարուած է այժմ, մեր դարում, և
այն էլ ոչ թէ արտաքին, բռնի ոյժով, այլ
օրէնքի միջոցով, նպատակ ունենալով
ստրկացնել գերմանական օրէնքի,
ճշնշել զիտութիւնը, և Գերմանիան դարձ-
նել Գիլիկ II-ի Սպանիա:

«Ժամանակ չէ ոչ ծիծաղելու, և ոչ էլ
սրտմտութեան. կրակի և մահու կոխ է
ինչ ծիծաղ, երբ կատարել բոցերը լափում
են ամբողջ տունը և նա մօտ է փչելու:

«Գերմանական ժողովրդին սպառնում է
մտաւոր անկում, և Եւրոպան շարանդաղ
կերպով դիտում է, թէ ինչպէս մեր երկրի-
քը փոքր առ փոքր ուժեղացում է լինում...»

Այդ դառն ողբով և կծու խօսքերով է
սկսում իր առաջնորդող Բերլինի յայտնի
«Die Gegenwart» շաբաթաթերթը, որին
յատուկ ակադէմիական, չոր ու ցամաք սառն
ոճի մէջ, այդ կրակոտ, անսահման կատա-
ղութեամբ լի յօդուածը կարմում է մի ան-
սովոր, տարօրինակ բացատրութիւն... Եւ ե-
թէ այդ լիզուով է խօսում մի պաղարին,
ակադէմիական օրդան, հասկանալի է,

թէ ինչ աղմուկ են բարձրացրել և ինչ շան-
թեր են թափում գերմանական ծայրահեղ
կուսակցութիւնների օրդանները...

Եւ իրաւունք ունենալով կարող էր երե-
ւակայել, որ այն երկիրը, որ եղել է գի-
տութեան սիրված հայրենիք, որ տուն
է մարդկութեանը մօրի և զաղափարի
հանձնարար զինուորների, որ եղել է վեր-
ջապէս բոլոր աշխարհի գիտութեան աղբիւր,
— ո՞վ կարող էր երեւակայել, ասում ենք,
որ այդ նոյն Գերմանիայում, այն էլ ըն-
խառն գիտութեան մէջ, ձայներ կը հնչեն
ընդդէմ գիտութեան, ընդդէմ ինչի ա-
ղաւտութեան, ընդդէմ այն բոլորի, ինչ
կազմում է ժամանակակից Գերմանիայի ա-
ռաջադիմութիւնը, փառքը, հոգիքը...

Սակայն ինչ ասէք, որ չէ կարելի սպա-
սել յետադէմ, միշտ խաւարի պաշտպան,
կղերական կուսակցութիւնից, որ այսօր
ոյժ առած ընկալաւոր մէջ, փորձում է
կապանքներ դնել գիտութեան, ինչի աղա-
տութեան վրա, և, ո՞վ գիտէ, երազում է
վերականգնել Հեոմի գերիշխանութիւնը և
վերադարձնել ամբողջ երկիրը աքաղաղ-
եղութեանը ու այդպիսով տօնել միջնա-
դարեան յետադիմութեան յաղթանակը...

Այդ յետադիմական ձգտումները իրարան-
ցում են զգնել ամբողջ Գերմանիայում: Գի-
տութեան, մամուլի և համալսարանների
ներկայացուցիչները բողոք են բարձրացրել
և հրաւիրում են ընկալաւոր գիմարդի
կղերական կուսակցութեան այն ձգտումնե-
րին, որ կարող է արտադր անձնաշինչը դրոշմ
դնել ամբողջ Գերմանիայի պատմութեան
վրա և մտաւոր անկման հասցնել գերմա-
նական ազգը...

Մամուլը հրաւեր է կարդում գիտու-
թեան և առաջադիմութեան բարեկամնե-
րին՝ միանալ և ընդհանուր ոյժով դիմադ-
րել «Die Gegenwart» շաբաթաթերթի հը-
րաւերը վերջնաւոր է հետեւալ գեղեցիկ
խօսքերով.

«Վտանգը մեծ է և մօտիկ. միանալը ա-
մենք և բողոք բարձրացնելը թէ խօսքով
և թէ գրչով: Ներկա ժամանակում ով ան-
տարբեր կը մնայ, նա մեղաւոր է և յան-
ցաւոր: Ուրեմն բողոքենք...»

ԿՈՎԿԱՆ: ՆԱ ԿԻԿԷ ԵՐ ԽՆԴՐԵԼՈՒ, ՈՐ ՀԱՆԳՈՒՆԵԼ

Գրեթէ Արծրունի աշակերտ Պոլսի «Արարատեան»
ընկերութեան, և մեծանուն ու հեռաւոր հրա-
պարակաւոր յայտնել էր Դանիալաբին, որ եթէ
պոլսեցիք ցանկանում են, որ ուսումնասիրել
պատեն նրանք ընկերութիւններին, պէտք է ամ-
փոփն իրանց ցրված ոյժերը և միացնեն մի և
նոյն նպատակին ծառայող այդ դանազան ընկե-
րութիւնները: Դանիալաբ վերադառնում է Պոլսի,
Արծրունու գաղափարներով տոգորված և իբրեւ
հետեւութիւն, Պոլսի երեք գլխաւոր ընկերու-
թիւնները՝ Արարատեան, Կիլիկիան և Գալոցա-
սիրացը՝ Արեւելեան միանում են և կազմում են
այժմեան «Միացեալ ընկերութիւնները»:
Արծրունու ցուցումների համեմատ, և այն ժա-
մանակ «Մշակ» էլ եռանդով օգնելով ինչպէս ար-
դէն յայտնի է:

«Հայրենիք» ուղղութեան մասին մեր նախորդ
յօդուածում փոքր ինչ խօսած ենք արդէն: Իսկ
թէ ինչպէս է գործում «Արեւելք», այդ մասին
թող բաական լինի ներկայացնել յայտնող նրա
խմբագրապետին: Մի օր, մի գրասենեակում, ուր
նստած էին ներս և ընկնում, կեղտոտ հազու-
տով և կեղտոտ ֆէտով, միջնադարի գիրուկ մի
մարդ: Ներկայացնում են մեզ միմեանք. «Իր-
զանք էֆէնդի ֆէշեան», «Արեւելքի» խմբագրա-
պետ: Վեր եմ կենում տեղիցս բարեկալ պոլսեցի
խմբագրապետին և սա մէջքից կէս դառնալով,
գետնից տաճկական ձեռով թէմէնաներ անե-
լով և կեղծաւոր ժպիտով մօտենում է ինձ: Մը-

«Բողոքները գերմանական ժողովրդի ա-
ռաջ, որի հաւատարմութիւնը բողոք է:
Բողոք այն բռնութեան դէմ, որ սպառնում
է ճշնշել գերմանական ազգի ամենամեծ
սեփականութիւնը. նրա ոգու ազատու-
թիւնը:»

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՐԸ ՀԱՅՈՅ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Եւ օր ա օր կան լրագիրների թղթակից-
ները հետեւալ տեղեկութիւններն են ստա-
ցել զործերի այժմեան վիճակի մասին
Հայաստանում: Վան, Խաբերդ և ուրիշ
տեղեր քրիստոնեաները վտանգի մէջ են:
Բամաղանի տօնին, որ այս ամսին է լինե-
լու, կարող է Հայաստանում մի նոր բար-
դուղիմոսեան գիշեր լուսանալ անգէն ու
անպաշտպան հայերի գլխին: Վտանգը մօտ
է և դուրս անխուսափելի: Մոլլաները մօ-
լեռանդութեամբ քարոզում են միսուլման-
ների քրեւորիկ հետ միանալ քրիստոնեա-
ների դէմ: Թիւրքերը խոստանում են քրեւ-
որիկն նոր կոտորածից յետոյ բաժին տալ
նրանց: Փոքր-Սօֆիայի քրիստոնեայ աղա-
քնակութեան վիճակը անտանելի է և ար-
ժանի խորը կարեկցութեան:

Անգլիական «Times» լրագիրն Կ. Պոլ-
սից հեռագրում են, «Հայոց քննիչ յանձ-
նաժողովը, որը գտնվում է Մուշում, իր
վերջին նիստում» հարցաւորածի ենթարկեց
մի քանի հայ վկաներին և նրանցից մէկը
ցոյց տուց քրեւորաներին այն վերքերի
հետքերը, որ նրան հասցրել էին թիւրքաց
զինուորները իրանց սուլիներով: Այն ինչ
թիւրքաց զինուորական վերաբոյժները պըն-
դում էին, որ այդ վերքերը այրուածքի
հետքեր են, և ոչ թէ սուլիների հարած-
ներից զոյացած վերքեր: Ի նկատի ունենա-
լով մի այդպիսի հակասութիւն, յանձնաժո-
ղով միջոց հրաւիրել մի օր և է օտար,
անկախ բժիշկ այդ վերքերը քննելու հա-
մար:

Նիւ-Եօրկի «Literary Digest» լրագ-
րի փետրվարի 2-ի համարում կարդում ենք.
«Գուցէ ամենատարօրինակ, մինչև անգամ
աչքի ընկնող երևոյթը ժամանակակից մա-

մուլի մէջ՝ դա այն կատարել լուսնի շնչն
է, որ ամբողջ Թիւրքիայի մամուլը պահում
է Սասունի կոտորածների նկատմամբ: Նոյն-
բեր և քրեւորներ ամիսների ընթացքում
Եւրոպան և Ամերիկան զըրգացին թիւրք
զօրքերի դէմ բարձրացրած մեղադրանքնե-
րից: Սակայն այդ բոլոր ժամանակը Թիւր-
քիայում յրատարակող թիւրքական, փրան-
սիական, յունական, անգլիական, և հայոց
լրագիրները մի բառ անգամ չը գրեցին այդ
անցքերի մասին: Իսկապէս այդ լրագիրների
տեղական բաժնի մեծագոյն մասը լըջ-
ված էր գանաղա տեղեկութիւններով
կամ ծաղիկը կարած երեխաների մասին,
կամ աղքատների մասին, որոնք իբր թէ օղ-
նութիւն են ստանում, և կամ սուլիների
հրամանով նորոգած մզկիթների և այլ այդ-
պիսի հետաքրքիր բաների մասին: Ս-
րուայ մեծ խնդրի Սասունի կոտորածների
մասին լրագրական տեղեկութիւնները սահ-
մանափակվեցին միայն հետեւալ երեք լու-
րերով: որոնք դուրս եկան Կ. Պոլսի բոլոր
թերթերում իբրեւ պաշտօնական տեղեկութիւն-
ներ: Ապա ամերիկական լրագիրը բերում է
այդ երեք պաշտօնական տեղեկութիւննե-
րը, որոնք ներկայացնում են ամբողջ դէպքը
իբրեւ «հայ աւազակների» սխառ զործ, ա-
ւելացնելով, որ քննութիւնը պէտք է պար-
զի հայերի յանցանքները այդ զործում:»

Անգլիական լրագիրներին հաղորդում
են Կ. Պոլսից, որ վերին աստիճանի ծանր
տագաւորութիւն է թողել նոյն իսկ Կ. Պոլ-
սում այն փաստը, որ Սասունի դէպքերի
ժամանակ կոտորել են նոյն իսկ երեխա-
ներին: Մի քանի վկաներ հաստատել են
քննիչ յանձնաժողովի առաջ, որ յիշուած
այդ բարբարոսութիւնը կատարվել է թիւրք
զինուորների ձեռքով:

Ֆրանսիական «Le Jour» լրագիրը
իր փետրվարի 24-ի համարում ապագրել
է հետեւեալը. «Կատարելապէս ճիշդ է, որ
իր ծննդեան 53-դ տարեդարձին սուլթանը
մօտ 20 րօպէ ունենալով ինչ շնորհեց
Հայոց պատրիարք Նզմիրեանին, որին նա
սասուն ընդունելութիւն էր ցոյց տուել ա-
ռաջին անգամ: Վերջին երկուշաբթի օրը,

ԻՆՉԱՅԻՆ ԵՔ ՀԱՆՈՒՄՈՒՄ ԱՅՈՒ ՎԱՄԻՔԵՐԸ:

Մի օր էր, Վալաթիայում անցնում էր մի բա-
րեկամի հետ, մօտենում է մեզ մի երիտասարդ
պարոն. բարեկամս ծանօթացնում է Յ. Ալփիար:
Պ. Ալփիար Պոլսի ամենից սրամիտ և երդիմա-
բան գրողն է, բայց հաստատուն գաղափար,
սկզբունք, որոշ համոզմունք, այդպիսի բաներ մի
փնտռէք քովը: Այս գրագէտը, քանի մի անգամ
Հայրենիքից «Արեւելք» և «Արեւելքից» էլ
Հայրենիքը ոտտոտելուց յետոյ, վերջին անգամ
մտել էր դարձեալ ֆէշեանի թերթի տակ և «Ա-
րեւելքի» մէջ կծու մի յօդուած էր գրել «Հայրե-
նիքի» երկու աշխատակիցների դէմ: Իսկ այժմ
նորից դժգոհ «Արեւելքից» ուղում էր թափել
«Հայրենիքի» դիրքը... Սոսկալի saltomortale-ներ
այնչափ սովորական են պոլսեցի գրագէտների
մէջ, որ շատ քիչերը պիտի դարձան թէ միև
նոյն մարդը այսօր գրում է մի լրագրի մէջ, դրա
հակառակօրէ մի խմբագրի դէմ, վաղը էլ այս
վերջինի դէմ առաջին լրագրի մէջ և այսպէս
կարող է շարունակվել ով գիտէ մինչև երբ:

Այժմ տեսնենք թէ ինչ են գրում առհասարակ
այդ լրագիրները:
Հայկական խնդրի մասին՝ ինքն ըստ ինքեան
ենթադրում է, ոչինչ չեն կարող գրել: Հայ լրա-
գիրներն այս մասին պարզապէս ծառայող են
տաճիկ լրագրութեան: Կառավարութիւնը իր շա-
հերին նպատաւոր է գտնում հրատարակութեան
տալ օտար մամուլի մէջ երեքսած մի յօդուած, յա-
նուն սուլթանի կամ որ և է մինիստրի տրված

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Կ. ՊՈԼՍՈՒՄ

(Ականատեսի տպագրութիւնները)

V

Այժմ, Կ. Պոլսում, հայոց գրականութիւնը
զաղաթած է, բառի բուն նշանակութեամբ: Երեք
լրագիր է հրատարակվում հայերէն լիզուով. «Հայ-
րենիք», ամեն օր, այսինքն շաբաթը 7 անգամ,
«Արեւելք», շաբաթը 6 անգամ, և «Փոնի», շաբաթը
մի անգամ:

Հրապարակին տիրող, թէ Պոլսում և թէ դա-
ւառնեւում ամենից շատ տարածվածը «Հայրե-
նիքն» է, որ օրական 4000 օրինակից աւելի է
ցրվում: Միւսները դրա կէսի չափ էլ չը կան:
Պոլսեցիք նախ խրտնում են եղել, բայց հիմա
կատարելապէս ընտելացել են այն մօքին, որ
«Հայրենիքի» տէր և տնօրէնի (Յ. Դանիալաբ)
հայ-կաթօղիկ լինելը ամենին չէ մշտում թերթի
ուղղութեանը և ամբողջովին ազդաւոր լինելուն:
Պ. Դանիալաբ՝ ֆրանսիական համալսարանից
վկայեալ իրաւագէտ, փաստաբան է և շատ լաւ
տանում է լրագրական գործը, աշակից ունենա-
լով իրան իբրեւ խմբագիրներ, Ա. Արփիարեանին,
Լ. Բաշալեանին և Ե. Օտեանին, որոնք գործում
են կատարեալ համերաշխութեամբ և անկողծ-
բէն: Պ. Դանիալաբեան երկու անգամ եկած է

սուլթանը վերաբերվել է նրան յարգանքով և բարեհաճութեամբ և յանկուծին էր յայտնել խորհրդակցել նրա հետ ապագայում այն գործերի առթիվ, որոնցով հետաքրքրվում է հայոց ազգը:

Մօսկվայի «Моск. Вѣдомости» լրագրի փետրվարի 17-ի համարում տպված է մի լրագրական հոդոց, որը հայոց հարցը վերաբերում է Ուլա զե հաւատում, ասում է լրագրիցը, որ հայոց քննիչ յանձնաժողովը կարող է լինել ultimo ratio. նրանք որոնք երեւակայում են, թէ այդ ֆանտաստիկական յանձնաժողովի ղեկավարը կարող է լուծել հարցը—չարաչափ սխալվում են... Կատարած հայերը և միսիոնարները ահապահ աղմուկ կը բարձրացնեն այն մասին, թէ յանձնաժողովի ղեկավարը լրակատար չէ, թէ հիւսկատոնները զիտմամբ իրանց աչքերը փակել են, և շատ բանի վրա մասների արանքով էին նայում և այն և այն: Սակայն Բ. Գուսար իրան բոլորովին հանգիստ չէ գցում, որովհետեւ անկարելի է մոռանալ, որ Գլխավոր ղեւ ևս կենդանի է, և նա կը շարունակի աղմուկ հանել հայոց հարցի առթիվ և յօդուածներ գրել սուլթանի և թուրքիայի դէմ:

ՆՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Անգլիական «Daily Graphic» լրագրին հաղորդում են Վիեննայից մի քանի մանրամասնութիւններ սուլթանի առաջին զարտուղար Սուրէյափաշայի մտական մասին: Բանից դուրս է գալիս, որ այդ մահը կապ ունի հայոց հարցի հետ:

Վ. Պօլսում յամառ կերպով տարածված է այն լուրը, թէ Սուրէյափաշան թունաւորված է: Սակայն հաստատ իրողութիւն է, որ փաշան մեռել է իր քնական մահով:

Երբ Սասունի ապստամբութեան առաջին լուրը պալատը հասաւ, սուլթանը բերանացի հրաման տուեց Սուրէյափաշային՝ հեռագրել Երզնկայի 4-րդ զօրամասին հրամանատար Զէքի-փաշային՝ անորձապէս զօրք ուղարկել և տեղն ու տեղը խեղդել ապստամբութիւնը: Մի քանի ժամանակ անցած, երբ Երզնկայում իմացվեց, թէ ինչ ձեռք են դասել խռովութիւնը, սուլթանը բարկացաւ իր զարտուղարի վրա նրա համար, որ նա իր շտապ կերպով արձակած մի բերանացի հրամանը այնպիսի խիստ ոճով է հաղորդել Զէքի-փաշային: Սուրէյափաշան, որ մի քանի ժամանակից ի վեր սրտի ցաւով տանջվում էր, այնքան յուզվեց այդ յանդիմանութիւնից, որ չը դիմացաւ և մեռաւ:

Հաղորդելով այդ մանրամասնութիւնը, «Daily Graphic» լրագիրը յայտնում է, որ այդ տեղեկութեան աղբիւրը «Բէյտերի գործակալութիւնն» է:

Ուղերձ, ուր անհուն գոհունակութիւն է յայտնվում կամ դաւաճների կուսակալներից ստացված տեղեկագիր, որի մէջ ժողովրդեան ամեն դասակարգերի վիճակը շնորհիվ վեհ. սուլթանի վարչադրոյն է ցոյց տրվում, այդ տեսակ լրագրերն ուղարկվում են պաշտօնապէս թիւրք թերթերին և մի և նոյն ժամանակ հրապարկում է բոլոր միւս լրագիրներին, որ այդ գրութիւններն իրանք էլ հրատարակեն:

Ազգային գործերի վրա կարող են գրել պարզապէս անմեղ լուրեր հաղորդելով կամ պատրիարքարանի ժողովների որոշումները հրատարակելով: այս վերջիններն էլ պատրիարքարանում պատրաստ խմբագրվում և յանձնվում են լրագիրներին: Քաղաքական լուրերը և երբեմն երբեմն այս առթիւ խմբագրականները նոյնպէս անկախօրէն չեն շարագրվում. հայ լրագիրները պարզապէս քաղաքական են անում: Վ. Պօլսի «Levant Herald»-ը, թիւրք լրագիրների առաջնորդողներից, և շատ քիչ անգամ էլ բուն եւրոպական լրագիրներից, բայց ուղարկութիւն դարձնելով, որ իրանց հայեանքը չը հակառակի վերոգրեալ լրագիրների գիտողութիւններին:

Մամուլի այս ճնշումը այնքան է նրանց ծառայական ոգուն ընտելացրել, և նրանց սրտում երկիւղ գցել, որ շատ անգամ կատարութեան թոյլատուութեամբ ստացված հեռագրական լուրերն էլ կոսկովում են հրատարակել:

Մի օրինակ.—հեռագրական գործակալութիւնը հաղորդել էր, թէ Քրանսիական հանրապետութեան

Այդ բաւական է արդէն համոզվելու, որ իրողութիւնը բոլորովին հակառակ կերպով է կատարվել և աւելի ճիշդ է այն լուրը, որ պատում է Վ. Պօլսում: Երբուրմի անգլիական հիւպատոսին աւջողվել էր ձեռք բերել Զէքի-փաշայից Վ. Պօլսի հրամանի պատճէնը և ուղարկել անգլիական ղեւպանին, սըր Ֆիլիպ Կէրիին:

Երբ անգլիական ղեւպանը յայտնում է այդ մասին սուլթանին, վերջինս, կարծելով թէ Սուրէյափաշան է յայտնել զարտուղար, սաստիկ բարկանում է նրա վրա և սպառնում է ամենախիստ պատժի ենթարկել Սուրէյափաշան վախից ընդունում է թոյն և մեռնում, և մեռնելուց առաջ պատմում է եղելութիւնը պալատական բժշկապետ և իր բարեկամ փնջամաշններին:

Երբ պալատում իմանում են այդ մասին, կանչում են փնջամաշններին և դրա հետեւներն այն եղաւ, որ մի քանի օրից յետոյ փնջամաշններն ևս յանկուծամահ եղաւ...

Դրանից յետոյ էր, որ, ինչպէս արդէն հեռագիրը հաղորդեց, սուլթանը հրամայեց զինուորական միսիտարութիւնից վերցնել և ոչնչացնել այն բոլոր զոյնուորանները, որոնք վերաբերում են Սասունի կոտորածին:

Սակայն, ինչպէս երևում է եւրոպական թղթակիցների տեղեկութիւններից, չը նայած Սուրէյափաշայի մեռնելուն, չը նայած պաշտօնական ղեկավարների անհետանալուն, ղեւպանները իրանց ձեռքում անհրաժեշտ փաստեր ունեն, որով ապացուցվում է, որ Սասունի կոտորածի հրամանը Վ. Պօլսից է տրված:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԿԻ ԱՆԻՄԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

Յունվարի 29-ին Վ. Պօլսի բոլոր եկեղեցիներում կարգադրեց իզմիրեան պատրիարքի օրհնութեան առջնախմբի կոնդակը:

Երկրորդ օրը այդ կոնդակը լոյս տեսաւ հայոց լրագիրներում, բայց մի քանի փոփոխութիւններով. ազգային սահմանադրութիւն, և այլ այդպիսի բառեր կառավարութիւնը չնջել է տուել տպագրած կոնդակի մէջ:

Պատրիարքական կոնդակը, որ բաւական մեծ մի գրութիւն է, ուղղութ է հայոց հոգեւորականութեան և ժողովրդի զանազան դասակարգերին: Կոնդակը սկսվում է այսպէս.

«Յայտ է Ձեզ, եղբարք իմ սիրելիք, թէ յօրէ անտի յօրում նուիրած էի զանձնս ի սպասաւորութիւն Բանին կենաց, կը ծառայի իմօվսանն Ս. Եկեղեցւոյս և Ազգիս, և ահա Ժողովն կոչեց զիս զտկարս և զկրտսերս յեղբարս իմ ծանրակիր պաշտօն Պատրիարքութեան, զոր յանձն ա-

նախադաս կազմվել Պէրիէն հրաժարվել է իր պաշտօնից: «Արեւելի» խմբագրապետը դիմում է իր գրաքննիչին թէ իրաւունք տալիս է այդ հեռագրութիւնը հրատարակելու. գրաքննիչը, որ ոչ մի հրահանգ չէր ստացել այս մասին, չէ թոյլատրում և «Արեւել» չէ հրատարակում: Հետեւալ առաւօտ նոյն լուրը տպւում են միւս լրագիրները, առանց գրաքննիչից հրաման խնդրելու, որին հարկ չը կարէր քանի որ հեռագիրը թղթ էր տրված և «Արեւել» այն ժամանակ միայն համարձակվում է կազմվել Պէրիէն հրաժարականի լուրը տալ:

Իսկ կարճիս սպանութեան ժամանակ աւելի ծիծաղելի է եղել: Կառավարութիւնը արգելում է բոլոր լրագիրներին գրել, թէ Քրանսիական պետութեան գլուխը սպանված է մարդասպանի ձեռքով և արգելում է այս մասին եկած բոլոր հեռագիրների հրատարակումը: Լրագիրներն էլ, որ հաղորդած էին թէ կարնոն Լիօն էր դնացել, յանկարծ հեռագրական լուր են հրատարակում, թէ Վերսալում կոնգրէս է գումարվում նոր նախագահ ընտրելու և ապա թէ կարնոն Լիօնում հիւանդութեամբ մեռել է:—Եւ ոչ որ բացի Պօլսի լրագիրներից ուրիշ աղբիւր չէ ունեցել, մինչև հիմա էլ անձանթ է մնացած կարնոնի պատահած եղեւական դէպքին և համոզված է որ նա բնական մահով մեռաւ: Բարեբախտաբար, Պօլսում Քրանսիայէն լեզուն շատ է տարածված, և ամեն սրճարանում ու ճաշարանում կան Քրանսիական լրագիրներ, ուր կը կարդային անշուշտ ճշմարտութիւնը:

Եւ ինչպիսի ապաստան յամենախիստ Սասունում, «Ռոյ» գրութիւնն ի տկարութեան կատարի ըստ առաքելոյն կազմված առ Սասունում հոգեւորապէս Սաղմոսեղոսին հետ, ի Բեզ Տէր յուսացայ, մի ամաչեցից յաւիտեան, յարգարութեան քում փրկելու և ապրեցնելու: Միանգամայն և Ձեր ամենեցուն աղօթք կը խնդրեմ, որպէս զի կարող լինիմ արժանապէս վարել սոյն վերակացութեան պաշտօնն յոր կոչուեցայ շնորհիւն Աստուծոյ և կամօք Ազգին և հաճութեամբ ինքնակալ Կայսեր Թուրքիոյ: Ապաքէն յայտնի է Ձեզ ամենեցուն, թէ պարտաւորութիւնն է մեծ հոգ տանել բարեգարգութեան եկեղեցեաց, մեր Սուրբ Եկեղեցւոյ նախկին ծիսից և կարգաւորեալ արարողութեանց միօրինակութեան, եկեղեցական պաշտօնէից իրենց նուիրական պարտուց անթերի կատարման, Ազգային երկսու մանկոցն բարեք կրթութեան, վանօրէից, հիւանդանոցաց, բարեգործական և աղքատներ հաստատութեանց յարատեւ պայծառութեան և անվիրար պահպանութեան: Եւ որպէս զի այս ամեն պարտաւորութիւնները լրակալ կատարեմ, հարկ անհրաժեշտ է որ վայելեմ թէ Եկեղեցական Ս. Հարց և թէ Հայ Ազգին աշակցութիւնը:

Ապա իր խօսքը ուղղելով յատկապէս հոգեւորականութեան ներկայացուցիչներին, եպիսկոպոսներին, վարդապետներին, քահանաներին և եկեղեցու ուրիշ սպասարարներին, ասում է.

«Հսկեցեք, քարոզեցեք, յորդորեցեք, և խրատեցեք որ Հայոց Ս. Եկեղեցւոյ որդիք սիրայօժար փութան ի կատարումն իրենց Քրիստոնէական պարտուց, Ազգային պարտուց և ժողովարարական պարտուց, միմիկարեցեք վշտացեալ և բեկեալ սրտերով Հոգ և խնամք տարէք աղքատաց, աղքատ հիւանդաց, որոց և այլեաց վիճակին բարւոքման և անոնց պիտոյից յանձնաձեռն: Հսկեցեք Հայ մանկտուն կրօնական, բարոյական և մտաւորական կրթութեան վրա, քաջաւերեցեք կրթութեան գործին յառաջացման համար ամեն հաստատութիւններն և ձեռնարկները, և օգնեցեք անոնց այնու հաստատուն համոզմամբ թէ տգիտութիւնը աղբիւր է ամենայն չարացոյց:

Դարձնելով իր խօսքը հայոց ժողովրդին, պատրիարքը ասում է.

«Սիրեցեք, ինչպէս արդէն Ձեզ ամենեցուն սիրելի եղած է, խնամել աղքատներն, որբերն և տնակները: Զանացեք, սիրելիք իմ Տէր, բոլոր կարևոր և բարեպաշտական հաստատութիւններն՝ վանքերն, եկեղեցիներն, վարժարաններն, Հիւանդանոցներն, Որբանոցներն և այլն, չեղ և վայելուչ վիճակի մէջ պահելու, և մի խնայեք ձեր նիւթական և բարոյական օժանդակութիւնն յօգուտ նոյնօրինակ հաստատութեանց ի փառս Ազգիս և ի պարճանս առաջի օտարաց:

Պատրիարքը դիմելով յատկապէս մայրերին, չե-

Տեղական, ներքին լուրերի համար էլ հայ լրագիրների աղբիւրը թիւրք և ֆրանսիական թերթերն են. շատ քիչ անգամ է պատահում, որ իրանք իրանցից կարդաւանս մի օր և է լուր հաղորդել: Մնում է այժմ գրական և բանասիրական մասը: «Արեւելի» ամբողջ առաջին երեսը և Հայրենիքի մի մասը լցվում է թարգմանութիւններով ֆրանսիական ամսագրերից կամ օրագրերից առնված, ամեն տեսակ նիւթերի վրա, բաւական է, որ վերացական բաներ լինեն: Երբեմն երևում էին քննադատական ինքնուրուք գրութեան, բայց այժմ դրանց թիւը և բովանդակութիւնն էլ այնքան նեղ չըլանալի մէջ է գրել գրաքննութիւնը, որ խմբագիրները բաւազոյն են համարում ոչինչ չը գրել:

Ապա գաւառական թղթակցութիւնները,—կը հարցնէք դուք:—Պօլսի լրագիրներն արդէն աղքատ էին թղթակցութիւններով, իսկ այժմ գրեթէ բոլորովին կտրվել են դրանք և եթէ կան էլ, չափազանց աննշան և ոչ մի կարևորութիւն չունեցող: Մի բան, որ երբեք չէ պակասել և պիտի չը պակսի պօլսական լրագիրներից և այն էլ ոչ թէ միայն հայ, այլ նաև օտար լրագիրներից.—ֆրանսիական վիպասանութիւնների խոշոր հատորներն են, որոնցով նրանք շարունակաբար կերակրում են իրանց ընթերցողներին: Պօլսեցին առանց ֆրանսիական, Ղերբ գրգռող բովանդակ չէ կարող ապրել. այդ արդէն նրա համար ող և ծուծ է դարձած, և լրագիրներն առատօրէն յաբեցնում են իրանց էջերում ժողովրդի այդ պահանջը:

տում է նրանց մեծ պատասխանատւութեան վրա սերնդի կրթութեան գործում, ասելով.

«Հայ երկսու մանկտուն կրթութեան գործին մէջ առաջին կրթիչն ու դաստիարակը դուք եք, մայրեր. ձեր այս կոչումը տիեզերաց Արարչէն է, ձեր այս կոչումն և պաշտօն մեծ և սուրբ են: Զանացեք, աշխատեցեք որ կատարեալ բարձր նկարագրի տէր մանչ ու աղջիկ զաւակներ յանձնէք Ազգին ու աշխարհին: Այս պարտաւորութեան կատարմանն յետոյ՝ կրնաք բնել թէ կատարեալ մայրեր եղած եք, և իրաւաւոր կը վայելէք յայնժամ ձեր որդւոց սէրն, յարգանքն և խնամքը ձեր յալիս ծերութեան խոնարհած ժամանակին մէջ»:

Դաստիարակներին ուղղած մասում պատրիարքը հետեւալ տողերն է գրել.

«Ազգին դաւակաց կրթութեան վերաբերմամբ, պարտք կը համարիմ յիշեցնել որ առանց Ձեր նըպատակէն չեղելու ուղղելի լինիք դաստիարակելու Ձեր աշակերտներն երկիւղին Աստուծոյ, զի «Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեսնուն է»: Ուսուցեք Ձեր աշակերտաց Քրիստոնէական Ս. Կրօնքն և նորա ուղիղ բարոյականը, զի մանկութեան ժամանակ անշնչելի յշատակաւ տղայոց մտաց մէջ կը տըպաւորուին աւանդուած կրօնական և բարոյական ամենակարեւոր գիտելիքները:

«Վարժեցուցեք Ձեր աշակերտները մայրենի լեզուի, պատմութեան, և այլ կարևոր և կենցաղօգուտ ուսմանց և գիտութեանց մէջ, նաև եթէ հնար ինչ է, ձեռագործի և արուեստից մէջ հրահանգեցեք դանձը, որպէս զի կարող լինին դատարկութեան և կարօտութեան դերձ մնալ»:

Դրանից յետոյ կոնդակը հետեւալ բարեմաղթութիւններն է անում.

«Ազգիներ և ինչոքնք սրտաբուլիս հաւաչանա՞ծ բարձիւր և ամենողորմածն Աստուած շնորհէ բուխնալ աշխարհի խաղաղութիւն և անգործութիւն: Ազգիներ ու ինչոքնք որ աղբիւրն իմաստութեան և շնորհաց՝ Սուրբ Հոգին շնորհէ մեզ հոգի գիտութեան, հոգի իմաստութեան, հոգի հանձնարոյ, հոգի աստուածապաշտութեան, և առաջնորդէ զմեզ ի ճշմարիտի, ի բարին և յօգտակարն: Ազգիներ և ինչոքնք որ մարդասէրն Աստուած Հայոց Առաքելական Ս. Եկեղեցին և զմեզ պահէ յամենայն չարէ. ինչպէս ուսուց մեր Փրկիչն Տէր Յիսուս Քրիստոս, թէ՛ «Այլ փրկեա զմեզ ի չարէ»: Ազգիներ և ինչոքնք որ Քաղաւորն Քաղաքաբաց Աստուած յաւիտեական» Թուրքիոյ լայնածաւալ Պետութեան միահեծան և ինքնակալ Կայսրն Օղտոստափառ Սուլթան Համիտ Խան պահէ ի ամենայն բարութեամբ և երջանկութեամբ: Կոնդակը վերջանում է հետեւալ խօսքերով.

«Հուսկ ապա կը յիշեցնեմ ձեզ ամենեցուն առաքելոյն սա խօսքը. «Այսուհետեւ, եղբարք որ ինչ ճշմարտութեամբ է, որ ինչ պարկեշտութեամբ,

Պօլսի հայ լրագիրներն բովանդակութիւնն ահա այն է, որ վերև նկարագրեցինք, իսկ լրագիրներից դուրս գրեթէ ոչ մի զիրք կամ տեսարակ չէ հրատարակվում, կամ այնքան աննշան, որ չարժէ վրան խօսել: Բայց երբեմն էլ՝ իրեն ինքնուրուք գրութեան, այնպիսի երկխոսական և ծիծաղելի բաներ են հրատարակում, որ մարդ չը դիտեցալի, թէ ծիծաղել դրանց վրա:

Պօլսի ամեն կողմի հայ գրավաճառների և ջրավաճառների (սրանք էլ մի տեսակ գրավաճառ և լրագրավաճառ են) խանութի վրա շարունակ տեսնում էի խոշոր տատերով յայտարարութիւն «Վաշխառութիւն Աղջիկը»: Անուում եմ մի օրինակ: Բնչ եմ կարդում այդ «սիրամիտ» մէջ: Մի երկտասարդ գրագիր սիրում է մի սեղանաւորի աղջկան. աղջիկն ու երիտասարդը կատարելապէս համաձայնում են միմեանց հետ, բայց չեն կարողանում ամուսնանալ զանազան հանգամանքների շնորհով, որոնք կամ երկխոսական և կամ անբնական բանն են դառնում հեղինակի գրչի տակ և ապա՝ (վերջաբար սքանչելի է) երկու սիրահարները անձնապատկերներ են գործում սեղանից վերջած պատառաքաղով և այս նորօրինակ դէպքն այնչափ ազդու է լինում, որ նրանք չ'աւայրկեան մը և տըքը անշնչանում, սառնում են:

Ականատես

որ ին
ինչ ս
որ ին
ար ին
լարու
Աստու
Բա
Տեղի
և ու
յոց
խաղա
մշկոց
և լո
տոյ
վա
տօմ
վեց
ներ
նում
ցիշն
եղա
ցանք
Հոգ
րում
ցիներ
գարն
և կո
սարս
Թապ
զրու
ըր բա
կանու
ձեռք
նայե
նեղու
Յիշ
սաւ մ
յարդ
դուրկ
կանու
գործ
Հետե
Նոր
խան
յին դ
նում
հետա
պատ
Ջերմ
չէ զա
արձա
բերու
հակա
Թիֆ
նիստ
վիշի
նում
կան
քաղա
հեռա
րու
ըի կր
մանակ
չուրե
ներ յա
Մեծ ի
Մեզ
21-ից
21-ին
Անգլ
Վ. Պոլս
սուլթան
նշանը

որ ինչ արդարութեամբ, որ ինչ սրբութեամբ, որ ինչ սիրով, որ ինչ համբաւ բարեաց գովութեամբ, որ ինչ զայն խորհիջիք: Չոր ուսարուքն և ընկալարուք և լուսար և տեսէք իրա, զայն արարէք, և Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ, Ամեն:

ՆԱՄԱԿ ԱԼԷԿՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Փետրվարի 13-ին

Բարեկենդանի օրերը բաւական ուրախ անցան: Տեղի ունեցան մի քանի ներկայացումներ հայերէն և ռուսերէն լեզուներով: Փետրվարի 12-ին տղայացի դպրոցում մանկական ներկայացում կար խաղացին «Ժպտա» կատակերգութիւն, «Կիւկիւի» մէկնոց կենսաբան, «Ոսկան Պետրովիչը դժուարեւում» և «Խէչօի թուղը»: բաւական աղու: Խաղից յետոյ տեղի ունեցան ժողովրդական պարեր:

Վարդանանց տօնի տարեգարծը նոյնպէս լաւ տօնակց: Ս. Փրկչի տղայացի դպրոցում կատարվեց հանդէս. ուրախալի է, որ այդպիսի հանդէսները ժամանակ դպրոցի դասիճը միշտ լի է լինում ժողովրդի ամեն դասակարգի ներկայացուցիչներով:

Եղանակը տաք է: Յոյս կայ որ այս տարի ցանքը լաւ լինի:

Հողաբաժանութեան համար մի քանի գիւղերում մեծ վէճեր կան. առհասարակ մեր գիւղացիների հոգը շատ պակաս է, և այդ պատճառով գաղանջ սկզբում միշտ տեղի են ունենում վէճեր և կռիւներ: Հողաբաժանութեան պատճառով սարսափելի վէճ ունեն ջարդաբաժանում գտնվող Թապաղուզ գիւղացիք: Բանը նրանումն է, որ գիւղացիները ուզում են թէ լաւ և թէ վատ հողը բաժանել ան ձի վրա, բայց գիւղի հողերում կանոնները, որ ցանկանում է ամբողջ գիւղը իր ձեռքում պահել, ուզում է, որ հողը նախնական դրութեամբ մնայ, այսինքն հարուստը մշտապէս հարուստ մնայ, իսկ աղքատը—աղքատ:

Առհասարակ պէտք է նկատել, որ հողերակալութիւնը հողերի մեծ մասը և լաւ մասը իր ձեռքն է գցել և չէ ուզում ժողովրդին տալ, չէ նայելով որ ժողովուրդը հողի համար սուկալի նեղութեան մէջ է:

Յիշեալ գիւղի վէճը այնքան մեծացաւ, որ հասաւ մինչև գաւառագետի առեանը. իշխանութիւնը յարգելով գիւղացիների խնդիրը՝ յոգուտ հողագիւղի գիւղացիներին է վճարել, բայց հողերակալութիւնը ամեն տեսակ խարդախ միջոցներ գործ է դնում, որ հողը կրկին իր ձեռքը մնայ: Հետեանքի մասին կը գրենք:

Շիրակեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՌԻՆԸ

Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաւիչին թիֆլիսի քաղաքային դռմայի կողմից ուղարկուած ցաւակցական հեռագրին Մեծ Իշխանը ուղարկել է հետեանալ պատասխան-հեռագիրը. «Թանգագին թիֆլիսի ջերմ մասնակցութիւնը ինձ մխիթարում է, բայց չէ զարմացնում, որովհետեւ զիտեմ, թէ նա միշտ արձադնէք է տուել այն բոլորին, ինչ որ վերաբերում է իմ ընտանիքին: Անկեղծ, ի սրտէս շնորհակալութիւն եմ յայտնում ձեզ բոլորիդ»:

Թիֆլիսի քաղաքային դռման, փետրվարի 20-ի նիստում, լսելով Մեծ Իշխան Ալեքսէի Միխայիլի մահվան լուրը և դռմայի նիստի դասիճում հոգեհանգիստ կատարելով Նորին Կայսերական Բարձրութեան համար, վճանք՝ յանձնարարել քաղաքապետի պաշտօնակատարին թիֆլիսի քաղաքի ազգաբնակչութեան կողմից ցաւակցական հեռագիր ուղարկել Նորին Կայսերական Բարձրութեան Միխայիլ Նիկոլաւիչին՝ նրա ընտանիքի կրած ծանր կորուստի համար: Մի և նոյն ժամանակ դռման յանձնարարեց քաղաքային վարչութեանը՝ անձամբ ցաւակցութեան զգացմունքներ յայտնել հանգուցեալի օգոստոսփառ եղբորը՝ Մեծ Իշխան Նիկոլայ Միխայիլիչին:

Մեզ հեռագրում են Արմաւիրից, փետրվարի 21-ից, հետեանալը. «Այսօր, երեքշաբթի, ամսիս 21-ին, հայոց կաթողիկոսը հասաւ Արմաւիր»:

Անգլիական «Times» լրագիրը հաստատում է Կ. Պոլսի մեր թղթակցի այն տեղեկութիւնը, թէ սուլթանը առաջին աստիճանի Օսմանիէ շքանշանը շնորհեց Խլմիրկան պատրիարքին:

Մեզ հաղորդում են, որ թիֆլիսի հայոց կոնսիստորիան չէ հաստատում Էջմիածնեցի եկեղեցու նոր երէցփոխի ընտրութիւնը: Ընտրութիւնը կատարվել է կանոնաւոր կերպով, ամենայն օրինաւորութեամբ. այդ խոտովանում է ինքը կոնսիստորիան: Բայց նոյն կոնսիստորիան մի նոր պատճառաբանութիւն է գտել երէցփոխներին չը հաստատելու համար, առեւով թէ՛ երէցփոխը պէտք է անշարժ կալուածք ունենայ, իբրեւ ապահովութիւն... Որպիսի միամտութիւն: Մոռանում են մեր սուրբ հայրերը, որ հայոց եկեղեցու հանգին, անսպառ հարստութիւնը կրանոյնները և թաւանները ունեցող հարուստները... Մի կողմ թուղէք այդ շինծու պատճառաբանութիւնները: Օրէնքը ասում է՝ «Երէցփոխը ընտրվում է յարգելի ծխակալներից», և երբ ծխակալները այս և այն անձին արժանաւոր դնելով, օրէնքաւոր ընտրութիւն են կատարում, պէտք է հաստատել և ուրիշ ոչինչ»:

Երիտասարդ ճանապարհորդներից մէկը, Ս. Ն. Միկելաչվիլի, որը մի քանի անգամ գնացել և ճանապարհորդել է Փոքր-Ասիա, մայրաքաղաքի լրագրիներին խօսքերով, փետրվարի 17-ին, Պետերբուրգի կայսերական ուսուցչի աշխարհագրական ընկերութեան մէջ պէտք է կարդաւ մի ընթերցանութիւն՝ իր անցեալ տարվայ ճանապարհորդութեան մասին թիւրքաց շայտատանի:

Հիւանդ և օգնութեան կարօտ Լոն վարդապետ խօսյալանցին հասցնելու համար, բացի նախկին 150 ռուբլուց, ստացանք, Բօժիկ-Պրօմիսլից՝ մի պարոնից՝ 40 ռուբլի, և թիֆլիսից, Վաղարշ Գալորշանեանի միջոցով, մի խումբ հաշակապանների մէջ հանգանակած, 3 ռուբլի:

«Моск. Вѣд.» լրագիրը հաղորդում է որպէս լուր, որ Տէլերի դէմաւորի ժողովի մէջ դեկտեմբերի 8-ին օրէնքի հակառակ թույլ տուած վճիռների համար պաշտօնական յանդիմանութիւններ են արված՝ Տէլերի նահանգական ազնուականութեան պարագլխի պաշտօնակատար՝ Տէլերի գաւառական պարագլխի Վասիլի Նիկոլաւիչի Տրուբնիկովին, և նահանգի գաւառական ազնուականութեան հինգ պարագլուխներին: Ապա ուղղւած ի նիցիատորին, վիսիգոնեան գաւառից ընտրված ձայնաւոր Ֆ. Ի. Ռոշչինսկին արգելված է մասնակցել դատակարարային և հասարակական ժողովներում և ընտրութիւններում և այդ ժողովներում ընտրվել: Նոյն պայմարական Մեծութիւնների պատկառութեան առիթով շնորհաւորութիւններ են մատուցանելու համար պատգամաւորներ էին ընտրված՝ Ռոշչինսկի, Կորչինսկեան գաւառի ձայնաւոր Ա. Ա. Գոլովաչևի և օստաշկովեան ազնուականութեան պարագլուխ Ս. Պ. Ուսիլին: «Моск. Вѣд.» լրագիրը խօսքով, միայն այդ վերջինից թույլ արվեց շնորհաւորութիւններ մատուցանել:

Փետրվարի 15-ին Պետերբուրգում տեղի ունեցաւ ժողովրդական լուսաւորութեան միջնորդի ամուսնու՝ Կոմսուհի Աննա Գելիանովի թաղումը: Առաւօտեան 10 ժամին դադարը փոխադրեցին հայոց եկեղեցին, ուր հոգեհանգստեան պատարագ մատուցանելուց յետոյ, սշակաւքը, շքեղ ամպօղակներ տալ, որի վրա զրված էր հանդուցեալի մարմինը, տարվեց Սմոլենսկի հայոց գերեզմանատունը, որտեղ և կատարվեց հանգուցեալի թաղումը: Լազարեան եկեղեցու թաղմանը, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, ներկայ էին ֆրանսիական, գերմանական, չեխական, բաւարական դեսպանները և դիպլոմատական կորպուսի ուրիշ անդամները, ներքին գործերի, երկրագործութեան և ֆինանսների մինիստրները, պետական կոնտրոլէօր Ֆիլիպով և շատ ուրիշ բարձրաստիճան անձինք: Դադարի ետեւից գնում էր Կոմս Գելիանով, նրա կողքին զբնակ էին դեսպանութիւնների անդամները: Հանգուցեալ Կոմսուհու դադարի վրա շատ պակներ էին գրված:

Լսում ենք, որ Երեսնի թեմի նախկին փոխաւորը Կիրիլ Եպիսկոպոս նշանակված է Բնարաւի թեմի թեմի կառավարիչ:

Վերի-Ա. ԳՈՐԴՈՒՄԻՑ մեզ գրում են. «Ահա երկու օր է ինչ լուր է տարածված, որ աւաղակա-

պետ Նաբին պատրաստվում է մեր կողմը անցնել: Այդ մասին, ինչպէս ասում են, Պարսկաստանից առուսաց կոնսուլն է յայտնել մեր գաւառագետին, որի կարգադրութեամբ ուղարկված է սահմանները մօտ 100 զինուոր, մի օֆիցէրի առաջնորդութեամբ: Այս օրերս Երասխը դուրս է գցել ափը մի դիակ, որը Նաբին ընկերներից մէկի դիակն է, որ նախկին յայտնի կուռի ժամանակ սպանվել էր»:

ԱՍԻԱՌԱԳԻՑ մեզ գրում են. «Ամսիս 9-ին, Երասխը, հասարակաց ժողովարանի դասիճում, բարեգործական նպատակով մի ներկայացում տուին: Խաղացին «Հապտոք քօլատ կտրի» և «Երկու հարիւր հազար» վոդվիլը: Չուտ արդիւնք եղաւ մօտաւորապէս 250 ռ.: Դասիճը կատարելապէս լի էր: Նոյն օրը, Վարդանանց տօնի առիթով, տեղիս հայոց եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց»:

ԱՐԻՎԻՆԻՑ մեզ գրում են. «Ամսիս 9-ին, Վարդանանց տօնի օրը, այստեղի հայալուսաւորչականների դպրոցի դասիճում աշակերտները և աշակերտուհիները տուեցին դրական երեկոյթ, որը, պէտք է խօստովանել, բաւական աջող և կենդանի անցաւ: Դասիճը լի էր երկու տեսի հասարակութեամբ: Այս անգամ կաթողիկ հայերն էլ փայլում էին իրանց եռանդուն մասնակցութեամբ երեկոյթին: Չէ կարելի չը գովել ուսուցչի Շահնազարեանի եռանդը, որ գրում և բերեց երեկոյթը: Երեկոյթին աչքի եր ընկնում ուսումնարանի հոգաբարձուների բացակայութիւնը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿՈՒՑԻՑ

Կ. Պոլսի, 14 փետրվարի

Երկուշաբթի փառաւորապէս տօնակցաւ սուլթանի ծննդեան տարեդարձն և այդ առթիւ, ըստ սովորութեան, բոլոր կրօնական պետերը գնացին պալատ շնորհաւորելու, որոնց մէջ էր նաև հայոց պատրիարքը:

Կայսրը լսելով անոր ներկայութիւնը, հաճեցաւ մասնաւոր ունկնդրութեան հրաւիրել և իր քովի ին իսկ նստեցնելով՝ 15 րոպէ առանձին տեսակցեցաւ անոր հետ: Կրտսի, թէ յանձնարարներ է պատրիարքին՝ ուղղակի իրեն յայտնել իր և հայ ազգի ցաւերը, առանձին տեղեկագրով, որպէս զի առանց պետական մարդոց խեղաթիւր ու մեծ և կայսրը ինքը տեղեկ լինի իրողութեանց: Սուլթանը խոստացել է անօրինակ հարկ եղած դարմանները, ըստ այնմ:

Իզմիրեան պատրիարքը համաձայնութիւն յայտնեց և իրօք, պալատէն վերադառնալուն պէս, պատրաստեց մի ընդհանուր ցուցակ, ուր մանրամասնաբար ցույց է արված ամեն ինչ, որ պատահած է մինչև այժմ, և տեղեկագրի պատրիարքարանի կրօնական և Գաղաքական ժողովներէ բաղկացած խումբ ժողովի հաւանութեանը ենթարկել վերջը, մի քանի օր առաջ տարաւ յանձնեց ուղղակի սուլթանին:

Լուր կը պատիւ, թէ Խլմիրկան այդ տեղեկագրի օրինակն ալ զրկած է Ռուսիոյ, Անգլիոյ, Գաղղիոյ և Խաղախ դեսպաններուն, բայց դեռ ստոյգ չը գիտենք:

Պօլսոյ մէջ պատահած վերջին սպանութեան դէպքերը մեծապէս յուզած են եւրօպական դեսպանները, որոնք խստիւ պահանջած են հարկ եղած ապահովութեան միջոցները ձեռք առնուլ: Եւ մեր կառավարութիւնը այժմ մէկ ծայրէն միւս ծայրն է անցած յանկարծ: Ամբողջ Բերան, Դաւլաթիայէն մինչև Երասխ ցուցահանգէս մըն է ձիաւոր, հետեակ, ծալտեալ, համադրեալով և ալլ ամեն տեսակ ոստիկաններու և պահապաններու, որոնք սուլթանի ձեռնի կաղմ և պատրաստ կեցած են թերևս ձերբակալելու... բոլոր անցորդները, ի բաց առեալ այն մարդը, որ նոր փորձ մը ընէ տանեակներով մարդ սպաննելու կամ վիրաւորելու:

Պ—

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, յունվարի 22-ին

Թունվարի 14-ին Սալմաստի գիւղերից շատերը ի մի խմբում՝ Փայաշուկ գիւղում տօնեցին ամն-

նայն հայոց կաթողիկոսի անուանակոչութեան տարեդարձը և հանդիսից յետոյ հեռադրեցին այդ մասին Էջմիածին: Այդ առիթով պատարագ եղաւ երգեցիկ խումբը բաղկացած էր Փայաշուկի և Ղաւրասարի աշակերտներից, իրանց ուսուցիչներով: Պատարագից յետոյ հանգէսը սկսվեց նոյն իսկ եկեղեցում, «Տէր կեցս դու զայս» օրհներգութեամբ: Ժողովուրդը ուղադրութեամբ լսում էր եղած անհնարանութիւնները:

Սալմաստում այս րօպէիս հետաքրքրական հարցը կենտրոնական դպրոցի խնդիրն է, որի մասին շատ անգամ խօսվել է թէ՛ «Մշակի» մէջ և թէ՛ եւրօպական հայ լրագիրներում: Եկել է այստեղ Սալմաստի վարդապետը, կենտրոնական դպրոցի կառուցանելու տեղը և թէ շինութեան ծախսը ծածկելու համար ժողովուրդի նրկական միջոցը ուսումնասիրելու նպատակով: Դպրոցի պահպանութեան դրամադուրը պէտք է կովկասի հայերը տան, որովհետեւ այստեղ միջոցներ չը կան: Այդ հարցի առիթով, յունվարի 17-ին, Հաֆթուսում ժողովի էին հրաւիրվել զանազան գիւղերի ներկայացուցիչները: Ժողովին մասնակցողներին տեղեկանում ենք, որ այստեղի թեմական տեսուչը մի տեղեկագրով առաջարկել է Հաֆթուսի այժմեան ուսումնարանը ծառայեցնել կենտրոնական դպրոցի շինութեան համար, նոր շինութեան ծախս չանելու մտքով: Սակայն այդ առաջարկութիւնը չէ ընդունված այն պատճառով՝ որ այժմեան եկեղեցու գաւթում ուսումնարան պահել անյարմար է թէ տեղի փոքրութեան և թէ գերեզմանատան հետ միասին լինելու համար:

Խնդիրը առկա թողնելով՝ ժողովը ցրվել է Լսում ենք, որ դալասարցիք ու փայաշուկցիք ուղում են, որ դպրոցը իրանց գիւղերում բացվի իսկ հաֆթուսից աշխատում են, որ իրանց գիւղերում լինի: Մենք՝ հակառակ չենք ոչ մէկի և ոչ միւսի այդ ցանկութեան, բայց այդպիսի ընդհանուր հարցում պէտք է մի կողմ թողնել լոկ գիւղի տեղական յարմարութիւնը, և ընտրել մի այնպիսի տեղ, որ թէ բոլոր գիւղերին յարմար լինի և թէ ուսումնարանական տեսակետից լաւ: —Յոյս ունենանք արդեօք, որ այդ կարևոր հարցը մոռացութեան չի տրվի, թէ խօսելով էլ կը վերջանայ...

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՐԻՆԸ

—Եղիպտոսում ներկայումս տիրապետում է հակա-անգլիական ուղղութիւն: Անգլիային բարեկամաբար վերաբերող միջնորդները՝ Նուրա-փաշա, Մաշուտ փաշա, Ֆակիր-փաշան անդադրել յարձակումներին են ենթարկվում եգիպտական մամուլի կողմից: Գործերը այնպիսի կերպարանք են ընդունել, որ հաւանական է համարվում եգիպտոսի խեղդի Աբաս-փաշայի դաժնկեցութիւնը:

—Լօնդոնից հեռագրում են, որ Ֆրանսիացի յայտնի սօցիալիտ Լուիզա Միշլէ մերձ ի մահ է: —Բերլինից «Temps» լրագրին հեռագրում են, որ գերմանական ոստիկանական վարչութիւնը հրամայեց դադարեցնել այն յանձնաժողովի նիստերը, որը ադիտացիա էր անում կանանց իրաւունքները ընդարձակելու համար: Այդ հրամանը չը կատարողները տուգանքների և բանտարկութեան կենթարկվին:

—Կ. Պոլսից «La Libre Parole» լրագրին հեռագրում են, որ Սկուտարիի նահանգապետը հրամայեց կալանաւորել առանց պատճառի աւրանական զանազան ցեղերի զինաւորներին և եօթ կաթողիկ արաւանքի լեւանականներին, որոնք աքաղաղվեցին Դիարբէքիւր: Ասում են, որ Աւստրիան կը բողոքի դրա դէմ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 փետրվարի Հրատարակված է Բարձրագոյն մանիֆէստ Մեծ Իշխան Ալեքսէի Միխայիլի մահվան մասին: Երէկ իսպանիկական տաճարում հոգեհանգիստ կատարվեց վախճանված Մեծ Իշխանի համար, ներկայութեամբ պետական խորհրդի անդամների, մինիստրների, Բարձրագոյն Պալատի անդամների և ուրիշ բարձրաստիճան անձանց:

«Правит. Вѣстн.» լրագրում յայտարարված է արդարադատութեան միջնորդը, ուղադրութիւն դարձնելով այն պայմանների վրա, որոնց ժամա-

